

5643



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 03 » 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 174 - 24

Նախաձեռնող՝

«Կապանի Լեռնահարստագման Կոմբինատ» ՓԲԸ

Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային փող. 4 շենք

Գործունեությունը՝

Թիվ L4-183 լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք, նախկին Շահումյան բնակավայր) 2020 թվականին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (Ռեկուլտիվացիայի) միջոցառումներ
Սյունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 174 - 24

«03» սեպտեմբեր 2024թ.

Թիվ ԼՎ-183 լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք, նախկին Շահումյան բնակավայր) 2020 թվականին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (Ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	/Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Կապան համայնք

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի լեռնահատկացման սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածքի հողերը արդյունաբերական նշանակության են:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի թ. ենթակետի:

Նկարագրական մաս. Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ին 2012 թվականի նոյեմբերի 27-ին տրված N ԼՎ-183 լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում 2020 թվականին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման միջոցառումների նպատակն է՝

- առաջացած փլուզման մակերևույթից լցման միջոցով տեղանքի նախկին, բնական տեսքի վերականգնումը,

- հետագա փլուզումներից խուսափելու համար մակերևույթին մոտ ապարաշերտերում կայուն լեռնային վիճակի և կայուն լեռնային ճնշման ապահովումը,

- հողածածկի հետագա դեգրադացիայի կանխումը,

- բնակչության և շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը,



-տարածքի գործառնական նշանակության վերականգնումը:

Փլուզումը տեղի է ունեցել 2020 թվականի աշնանը, Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի մակերևույթի հյուսիսային հատվածում, նախկին Շահումյան Բանավանից դեպի 1.14կմ հյուսիս արևմուտք, միմյանցից՝ 21 մետր հեռավորության վրա: Փլուզված տարածքները տեղակայված են հյուսիսային երակ 5-ի վերևում: Փլվածքը հատվում է 830-845 հորիզոնից վեր մշակված տարածության հանքաճեղքի և նախկինում՝ ԽՍՀՄ ժամանակահատվածում անցկացված երակ N 5-ի արևելյան հատվածի 860 հորիզոնի հետ:

Փլուզված փոսերը ձագարածև տեսք ունեն, որոնցից մեծի արտաչափներն ըստ տարածման կազմում են $R=13$ մ, իսկ ըստ հզորության՝ 16 մետր, բացվածքի մակերեսը կազմում է 22 530.66 մ², փոքր փոսի արտաչափներն ըստ տարածման կազմում են $R=10.13$ մ, իսկ հզորության՝ 10 մետր, որի բացվածքի մակերեսը կազմում է 322.22 մ²: Փլվածքի մոտ մակերևույթը գտնվում է 913-912 մետր բարձրության վրա, իսկ փլվածքի ստորին նիշը գտնվում է 896-902 մետր բարձրության վրա: Ընդհանուր ծավալը կազմում է 6700 մ³ :

Փլվածքի մոտ մակերևույթը գտնվում է 913-912 մետր բարձրության վրա, իսկ փլվածքի ստորին նիշը գտնվում է 896-902 մետր բարձրության վրա: Ընդհանուր ծավալը կազմում է 6700 մ³ :

Անմիջապես փլվածքի ստորին եզրից ներքև՝ մինչև 860 հորիզոն, առկա է դատարկ, բաց տարածություն, որն առաջացել է հյուսիսային երակ 5-ի ԽՍՀՄ ժամանակահատվածում արդյունահանման հետևանքով:

Նախատեսվող գործունեության կորդինատներն ըստ WGS -84 (ARMREF 02) համակարգի հետևյալն են՝

-փլվածք 1 կենտրոն 8623140,76, 4344467,34

-փլվածք 2 կենտրոն 8623187,24, 4344458,0

Փլուզվել են երկու՝ իրարից ոչ հեռու տեղամասեր, որոնցից մեկը, արտաչափներով մեծ, մյուսը՝ փոքր: Մեծ ձագարից դելուվյալ զանգվածը լցափակել է անմիջապես ստորին հորիզոնը, իսկ փոքր փլուզումը ենթադրվում է, որ փլուզվել է դեպի արևելք:

Ռեկուլտիվացման համար անհրաժեշտ բերրի հողի շերտը նախատեսվում է բերել նախատեսվող գործունեության տարածքից մոտ 1 կմ հեռավորության վրա գտնվող ընկերությանը պատկանող բերրի հողի պահեստարանից: Հաշվի առնելով հողի շերտի հաստությունը (25սմ) և ռեկուլտիվացիայի ենթակա տարածքների մակերեսները (մոտ 852.88 մ²)՝ ընդհանուր կպահանջվի 213.22 մ³ հողաբուսաշերտ:

Միջոցառումների առաջին փուլում նախատեսվում է իրականացնել առաջացած դատարկության վերացում՝ դատարկ ապարների (ժայռային մակաբացման ապարներ) տեղակայման միջոցով: Հաշվի առնելով փլուզումների բնույթը և տվյալ հատվածի ստորերկյա եղանակով լցափակման անհնարինությունը՝ ռելիեֆի վերականգնումը դատարկ ապարներով լցափակմամբ իրականացվելու է վերգետնյա մասից:

Երկրորդ փուլում նախատեսվում է մակերևույթի ռեկուլտիվացիա հողի բերրի շերտի տեղակայման և կանաչապատման միջոցով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 830 հորիզոնից ներքև մինչև 790 հորիզոնը մշակված տարածությունները լցափակված են դատարկ ապարներով, իսկ մակերևույթից ներքև մինչև 830 հորիզոնը փլուզման հետևանքով լցափակվել է դելուվյալ շերտով, ուստի նախատեսվում է լցման աշխատանքները կատարել լցում մակերևույթից՝ երկու ուղղությամբ: Առաջինը նախատեսվում է լցափակել փոքր փլուզումը, այնուհետև՝ մեծը: Փլուզումներին հնարավոր է մոտենալ երկու



միջհանդային ճանապարհներով: Բեռնատար մեքենաների անվտանգ աշխատանքն ապահովելու համար նախատեսվում է դատարկ ապարների տեղափոխումն իրականացնել երկու ճանապարհներով՝ չոր եղանակի պայմաններում կարճ ճանապարհով, իսկ անձրևային կամ ձմեռային պայմաններում՝ երկար ճանապարհով:

Դատարկ ապարները սկզբում կտեղափոխվեն դեպի փլուզված տեղամասի եզր, որտեղից CAT D9 բուլդոզերով կլցվեն առաջացած փոսը:

Փլվածքի հատակը կայունացնելու նպատակով նախատեսվում է մակերևույթից դատարկ ապարի լիցք դեպի փլվածքի հատակը: Նախագծով նախատեսվում է փլվածքի հատակը հյուսիսային հատվածում բերել 915 մետր բարձրության, իսկ հարավային կողմում՝ 917 մետր բարձրության, 6700 մ³ ծավալով:

Դատարկ ապարների տեղափոխումն իրականացվելու է երակ N5-ի հարակից՝ 1-1.2կմ. հեռավորությունից, նախկինում կուտակված դատարկ ապարի տարածքից: Աշխատանքներն իրականացվելու են KAMAZ 6520-021 ինքնաթափերով, իսկ լցման աշխատանքները՝ D966 անիվային բարձիչով:

Դատարկ ապարների տեղակայման միջոցով փլուզված տարածքի վերականգնողական աշխատանքները և շրջակա միջավայրի համար անվտանգ պայմաններ ապահովելուց հետո, նախատեսվում է սպասել մոտ երկու տարի, մինչև տարածքի կայունացում: Անհրաժեշտության դեպքում դատարկ ապարով լցվելու են այն բոլոր հատվածները որոնք կայունացման գործընթացից հետո նորից լցնելու կարիք կունենան: Դատարկ ապարով լցնված փլուզված տարածքի կայունությունը ապահովելուց հետո նախատեսվում է կավային հաստ շերտ լցնել՝ (շուրջ 1-2 մ) փլվածքի ջրակլանիչ հատվածը, որպեսզի կանխվի հնարավոր ֆիլտրացիան: Կավի շերտի տոփանումից հետո այն կնախապատրաստվի կենսաբանական ռեկուլտիվացիայի շերտը լցնելուն:

Ջրամեկուսիչ կավային տոփանված շերտի վրա ամբողջ հարթությամբ լցվելու է հողի բերրի շերտ՝ 25 սմ նվազագույն հաստությամբ:

Ռեկուլտիվացվող շերտի մակերեսի գերխտացումը նվազեցնելու նպատակով հողերի հարթեցման աշխատանքների իրականացման ժամանակ հողերի մաքուր հարթեցումը նախատեսված է գրունտի վրա ցածր տեսակարար ճնշմամբ տեխնիկայով:

Նախատեսվող գործունեության իրականացման ծախսերը նախնական գնահատմամբ լինելու են 27579290 ՀՀ դրամ:

Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքում մակերևութային ջրերը վերահսկելու և կառավարելու համար նախատեսված չեն ուղղորդիչ ջրատարներ, քանի որ տարածքները բավականին փոքր են և երկրաբանական ռելիեֆը այնպիսին է, որ տարածքով ընդգծված մակերևութային ջրահոսքեր չեն անցնում:

Ռեկուլտիվացիոն գործընթացի ավարտից հետո վերականգնված բուսականությունը և վերականգնման առաջընթացն ու մակերևութային ջրահոսքերի առկայությունը վերահսկվելու է առնվազն 1 տարի: Տարածքի մոնիտորինգի և պահպանության արդյունքում ըստ անհրաժեշտության, վերականգնված տարածքի մոտ 50%-ում կրկնակի սերմնացան կկատարվի:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում խմելու ջուրը մատակարարվելու է ընկերության տարածքից, իսկ սանիտարահիգիենիկ կարիքները համար ընկերության ցնցուղարաններից:

Նախատեսվող գործունեության ընթացքում հնարավոր է առաջանան յուղատուված լաթեր և կենցաղային թափոններ: Յուղոտված լաթերը նախատեսվում է տեղափոխել ընկերության



տարածքում հատուկ նախատեսված մետաղական տարողություններ, տարողությունները պահվելու են բանեցված յուղերի կուտակման տեղամասում հատուկ մասնագիտացված ընկերությունների հետագա վերամշակման կամ ոչնչացման նպատակով, իսկ կենցաղային թափոնները տեղափոխվելու են քաղաքային աղբավայր համապատասխան պայմանագրային հիմունքներով:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- փոշու արտանետումների նվազեցման համար կատարվելու է տարածքի ջրցանում,
 - քանի որ արտանետումների հիմական աղբյուրներ են հանդիսանում շինարարական տեխնիկան և փոխադրամիջոցները, նախատեսվում է պարբերաբար ստուգել դրանց տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
 - նախատեսվող գործունեության ընթացքում աշխատող ծանր տեխնիկայի պարբերական տեխնիկական ստուգում յուղերի և վառելի արտահոսքի կանխման նպատակով,
 - տեխնիկատրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները և լվացումը պետք է կատարել միայն մոտակա բնակավայրերի կամ ընկերության տարածքում գտնվող ավտոսպասարկման համապատասխան կետերում,
 - հողի աղտոտումը կենցաղային թափոնով կանխելու նպատակով՝ սննդի ընդունման և աշխատակազմի հանգստյան վայրերում տեղադրվում են աղբամաններ,
 - փլվածքի լցման համար օգտագործվելու են միայն գործող ճանապարհները, հավելյալ կանաչ տարածքները չվնասելու նպատակով:
- կենսաբանական ռեկուլտիվացումն իրականացվելու է միայն տեղանքին բնորոշ բուսատեսակներով:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- կենսաբազմազանության ուսումնասիրություն՝ շահագործման ընթացքում յուրաքանչյուր 3 տարին 1 անգամ,
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,
- առկա թափոնների տեղափոխում՝ շաբաթական մեկ անգամ,
- մակերևութային ջրեր՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Սյունիքի մարզի Կապան համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, հնչակի նահ



շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

-Անհրաժեշտ է լեռնային լցման աշխատանքներն իրականացնելիս համաձայնեցնել գործունեության իրականացման տարածքին հարակից զինվորական հրաձգարանի զորամասի հրամանատարական կազմի հետ:

-Անհրաժեշտ է մեկ տարվա ընթացքում պարբերաբար իրականացնել մոնիթորինգ, որոշակի հատվածներում, անհրաժեշտության դեպքում, կրկնակի սերմնացանի իրականացման նպատակով:

- Անհրաժեշտ է կենսաբանական ռեկուլտիվացումն իրականացնել միայն տեղանքին բնորոշ բուսատեսակներով:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒ ՄԱՍ

Թիվ ԼՎ-183 լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք, նախկին Շահումյան բնակավայր) 2020 թվականին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (Ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան